Արձանագրություն N 4

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ և ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 13.10.2020թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 3-րդ չափաբաժնի մասով բողոքներ քննող անձի կողմից ընդունած որոշման կատարման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 02.10.2020թ. (հրապարակված 06.10.2020թ.) ընդունվել է թիվ ԳԲՔԱ-Լ0-2020/100 որոշումը, որով պարտավորեցվել է գնահատող հանձնաժողովին ընդունել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 3-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցությունների արդյունքում <<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ-ին՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու և հայտը մերժելու վերաբերյալ որոշումներ:

1.2 Ի կատարումն բողոքներ քննող անձի որոշման՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- Ուժը կորցրած ճանաչել Ընթացակարգի N 2.5 արձանագրության 3-րդ չափաբաժնի մասով 2-րդ և 3-րդ կետերով ընդունած որոշումները:
- Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 2020 թվականի հոկտեմբերի 16-ին ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկում, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի ընդունարանի խորհրդակցությունների սենյակում) կազմակերպել գների նվազեցման շուրջ կրկնակի բանակցություններ և հրավիրել ոչ գնային պայմանները բավարարող գնահատված ստորև նշված մասնակիցներին.

Չափաբաժին N 3

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	<<Ինտերեվրոս - Արգոս>> ՍՊԸ	754 086 800	432 510 000	80 000 000	102 502 000	615 012 000
2	<<Վանի>> ՍՊԸ		400 000 000	167 847 968	113 569 594	681 417 562
3	<<ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ		502 724 573	100 544 915	120 653 898	723 923 386
4	<<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ		588 203 883	17 646 117	121 170 000	727 020 000
5	<<ԱՐՏԱՐՍ>> ՍՊԸ		562 755 705	61 000 000	124 751 141	748 506 846

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բանակցությունների կազմակեպման և անցկացման կարգի մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Բանակցություններին ներկա մասնակիցների կողմից նվազագույն գին ներկայացնելու նպատակով կտրամադրվի 3 (երեք) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են գնի իջեցումներ լինեն և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն էլեկտրոնային աղյուսակի տեսքով: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակցի ներկայացրած գնի, հրավերով սահմանված չափանիշների գնահատման հիման վրա որոշվում ու հայտարարվում է ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան